Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գրիգոր Գույյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կանադա (Մոնրեալ)՝ 2023 թվականի մայիսի 28-ից մինչև 2023 հունիսի 4-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամ (Multilateral Fund):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 92-րդ նիստում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Բազմակողմանի հիմնադրամի անդամավճարների և ծախսերի կարգավիճակը, ֆինանսական միջոցների հասանելիության հաշվեկշիռը:
   2. Մոնրեալի արձանագրության անդամ պետությունների կողմից ներկայացված հաշվետվություններն ու պարտականությունների չկատարման հնարավոր դեպքերը:
   3. Տարածաշրջանային օզոնային ցանցերի գործունեության գնահատման հաշվետվության արդյունքներն ու առաջարկությունները:
   4. Մոնրեալի արձանագրության անդամ պետությունների կողմից իրականացվող ծրագրերի իրականացման ընթացքները, հնարավոր ուշացումները:
   5. Մոնրեալի արձանագրության մի շարք անդամ պետությունների կողմից ներկայացված ծրագրային հայտերը:
   6. Մոնրեալի արձանագրության Կիգալիի փոփոխությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես՝ 5-րդ հոդվածի երկրներում ՀՖԱ-ների փուլային կրճատման

ծախսերի ուղեցույցների մշակում, սառնամատակարարման համակարգերի սպասարկման ոլորտում ՀՖԱ-երի ֆինանսավորման մակարդակի և եղանակների վերլուծություն, ՀՖԱ-ների փուլային կրճատման համար, էներգաարդյունավետության հարակից հարցեր:
7. Կիգալիի փոփոխության իրականացման ծրագրերի 1-ին փուլի շրջանակում կառավարությունների հետ պայմանագրերի նախագիծը:
8. Բազմակողմանի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գենդերային ինտեգրման գործառնական քաղաքականությունը:
9. Արդյունքների շրջանակ և Բազմակողմանի հիմնադրամի գործունեությանը համապատասխանող գնահատման քարտ:

7. **Հանդիպումները, ելույթները.**
Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 92-րդ նիստի շրջանակներում իմ կողմից նախաձեռնվել են հետևյալ երկկողմ հանդիպումները.
- ԱՄՆ-ի, Կանադայի և Ավստրալիայի պատվիրակության անդամների հետ տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում ևս մեկ անգամ անդրադարձ է արվել Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված արդյունավետ աշխատանքներին՝ Եվրոպայի և Կենտրոնակա Ասիայի տարածաշրջանի շահերի պաշտպանության ուղղությամբ, որոնց շնորհիվ տարածաշրջանին տրամադրվել է գործադիր կոմիտեում մշտական անդամակցություն: Այս ենթատեքստում առաջին անգամ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի անդամակցությունը ապահովվել է հենց այս նիստում Հայաստանի Հանրապետության կողմից:
- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղարի հետ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ նվիրված 2023 թվականի Օզոնային շերտի պահպանության համաշխարհային օրվան (սեպտեմբերի 16) նվիրված միջոցառումներին մասնակցություն բերելու նպատակով:
- Օրակարգային հարցերի քննարկման ժամանակ հայտնել եմ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների հետ նախապես համաձայնեցված դիրքորոշումները:
- Բաց կազմով աշխատանքային խմբի համանախագահ՝ Բելգիայի ներկայացուցչի հետ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում, որի ընթացքում Բելգիայի ներկայացուցիչը ճշտել է հուլիսին կայանալիք Բաց կազմով աշխատանքային խմբի հանդիպմանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունը՝ տեղում ձևավորվող աշխատանքային խմբերի աշխատանքը Հայաստանի ներկայացուցչի կողմից ղեկավարելու նպատակով:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
- Գործադիր կոմիտեի 92-րդ նիստում կայացված որոշումներին կարելի է ծանոթանալ այստեղ. http://multilateralfund.org/92/Report%20of%20the%20ninetieth%20meeting%20of%20the%20Executive%20C/1/9256.pdf

- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղարի հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետությունում Օզոնային շերտի պահպանության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումներին:
- 2023 թվականի հուլիսին կայանալիք Բաց կազմով աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու դեպքում հայտնել եմ իմ համաձայնությունը ղեկավարելու տեղում ձևավորվող աշխատանքային խմբերի աշխատանքը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկում եմ Օզոնային շերտի պահպանության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումները կազմակերպել Հայաստանում Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղարի, շահագրգիռ կողմ հանդիսացող այլ գերատեսչությունների ղեկավարների մասնակցությամբ՝ արձանագրելու Հայաստանի Հանրապետության ձեռքբերված նվաճումները:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*08.06.2023թ.*